ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք.Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 111

05 մայիսի 2018 թվականի

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 20-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2018 թվականի ապրիլի 20-ի թիվ 27 որոշումը՝ ***որոշում եմ***

1 Անի համայնքապետարանի 2018 թվականի կարիքների համար հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի միջոցով **ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ բնակավայրի ասֆալտապատ փողոցների վերանորոգման աշխատանքների** ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ – Ա. Գևորգյան – Անի համայնքապետ

Անդամներ – Մ. Դարբինյան – <<Անի կոմունալ տնտեսություն>> բյուջետային հիմնարկի տնօրեն

Գ. Գրիգորյան – գլխավոր մասնագետի ժ/պ

Հ. Ալեքյան – առաջատար մասնագետ ժ/պ

2 Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Լիլիթ Նիկոլյանին:
3 Գնման հայտը հաստատելու համար պատասխանատու ստորաբաժանման նիստը հրավիրել 2018 թվականի մայիսի 7-ին, ժամը 14:00-ին, Անի համայնքապետարանում, ք. Մարալիկ, Մաղաթյան 1 հասցեով:
4 Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետի 2018 թվականի ապրիլի 25-ի թիվ 103 որոշումը:
5 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2018 թ. Մայիսի 5
Անի համայնք